221

1. Իմ տխրության ժամին,
Երբ խավար է միտքս,
Փորձության պահերին,
Երբ տրտում է սիրտս,
    Ծնկելու եմ գնում
    Փրկչիս ոտքերի մոտ,
    Ոտքերն եմ համբուրում,
    Որ էլ չզգամ կարոտ:

2. Երբ դժվարության մեջ
Արցունքն է ինձ խեղդում,
Ծփոթվում եմ անվերջ
Եվ ելքը չեմ գտնում,
    Նորից եմ ես գնում
    Փրկչիս ոտքերի մոտ,
    Ոտքերն եմ համբուրում,
    Որ էլ չզգամ կարոտ:

3. Բայց գիտեմ ես Մեկին՝
Հավասարը չունի.
Սիրում է ամենքին
Հարուցյալ Հիսուսն իմ:
    Ես Նրան եմ գնում
    Բոլոր ցավերիս մեջ
    Եվ հանգիստ եմ գտնում
    Մշտական և անվերջ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025